# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

<20> Մայիսի 2017թ. N 229-Ն

## ՀԱՅՏԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎՆ ՈՒ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 16 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել հայտերի գրանցամատյանի.

1) ձևը՝ համաձայն հավելված N 1-ի:

2) վարման կարգը՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2001 թվականի հունվարի 17-ի «Մրցույթի հայտերի գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» N 16 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Վ. ԱՐԱՄՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Ֆինանսների նախարարի
2017 թվականի դեկտեմբերի N 229-Ն հրամանի

*Հաստատված է*
*--- --------- 20 -- թ.-ին*
*Ընդամենը՝ ---- էջ*

Կ. Տ

# ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

## ՀԱՅՏԵՐԻ

Պատվիրատուի անվանումը՝ _____

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ _____

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ _____ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Էջ N

# ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ

| հ/հ | Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը) | Մասնակցի՝ այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները և ամսաթվերը, որով ներկայացվել է հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը) | Հայտերի ստացման | | Հայտը գրանցողի ստորագրությունը | Նշագրումներ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ամիսը, ամսաթիվը | Ժամը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

Էջ N ---

Հավելված N 2
ՀՀ Ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի N 229 - Ն հրամանի

# ԿԱՐԳ

## ՀԱՅՏԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հայտերի գրանցամատյանի վարման հետ կապված հարաբերությունները:

## II. ՀԱՅՏԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Փաստաթղթային եղանակով գնումներ կատարելու յուրաքանչյուր ընթացակարգի համար, բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով սահմանված հիմքերով գնումներ կատարելու դեպքերի, պատվիրատուն վարում է հայտերի առանձին գրանցամատյան (այսուհետև՝ գրանցամատյան):

3. Ներկայացված հայտերն ընդունում և գրանցամատյանում գրանցում է գնահատող հանձնաժողովի քարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

4. Գրանցամատյանի էջերը համարակալվում, կարվում, ստորագրվում են քարտուղարի կողմից: Նախաորակավորման հայտարարության կամ հրավերի հաստատման օրը գրանցամատյանի առաջին էջի վրա դրվում է պատվիրատուի կնիքը և քարտուղարի ստորագրությունը, գրվում է գրանցամատյանի էջերի քանակը:

5. Գրանցամատյանում գրառումները կատարվում են թանաքով, ջնջումներ և քերվածքներ կատարել չի թույլատրվում, ուղղումները կատարվում են միայն քարտուղարի կողմից: Գրանցամատյանում ուղղումներ կատարելու դեպքում՝ գրանցամատյանի «Նշագրումներ» սյունակում դրվում է քարտուղարի ստորագրությունը: Մինչև սահմանված կարգով գնահատող հանձնաժողովի լուծարումը, գրանցամատյանի անվնաս պահպանման համար պատասխանատու է քարտուղարը:

6. Հայտ պարունակող ծրարի վրա, գրանցամատյանի վարման պատասխանատուն նշում է գրանցամատյանում տվյալ ծրարի գրանցման համարը, գրանցման օրը և ժամը՝ ստորագրում ծրագրի վրա իր կողմից կատարված գրառումների տակ:

7. Հայտ ներկայացրած անձի պահանջով՝ նման պահանջ ներկայացվելու օրվա ընթացքում, պատվիրատուն վերջինիս տալիս է տեղեկանք՝ համաձայն N 1 ձևի՝

ներկայացված հայտի գրանցման մասին: Քարտուղարը տեղեկանքը կազմում և ստորագրում է երկու օրինակից: Տեղեկանքի երկու օրինակները կնքվում են պատվիրատուի կնիքով, մեկ օրինակը տրվում է տեղեկանք ստանալու պահանջ ներկայացրած անձին, մյուս օրինակը կցվում է գրանցամատյանին, որպես դրա անբաժանելի մաս:

8. Գրանցամատյանը, դրա անբաժանելի մաս հանդիսացող տեղեկանքները կցվում են գնումների ընթացակարգի արձանագրությանը և հանդիսանում դրա անբաժանելի մասը:

Ձև N 1

# ՏԵՂԵԿԱՆՔ N___

## ՀԱՅՏԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

| | |
|---|---|
| Պատվիրատուի անվանումը՝<br><br>Գնման ընթացակարգի ծածկագիրը՝<br><br>Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ | _____<br><br>_____<br><br>_____ _____<br>(անուն, ազգանուն) (ստորագրություն) |
| Տեղեկանքը տրվում է՝ | _____ _____<br>(տեղեկանք ստանալու պահանջ ներկայացրած անձի անվանումը, (անուն, ազգանուն) (Տեղեկանքը առձեռն ստացողի անձը հաստատող փաստաթղթի անունը և համարը) |

Սույնով հայտնվում է, որ վերը նշված ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով՝_____ -ի անունից ներկայացվել է հայտ
մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)
պարունակող ծրար, որը գրանցվել է գրանցամատյանում:
Հայտի գրանցման տվյալներն են՝

Ընդունման և գրանցման՝ _____
(ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ժամը)

Հայտի գրանցման հերթական համարը՝ _____

Սույն տեղեկանքը կազմվել է երկու օրինակից՝ ------ -------20 -- թվականին: